ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՆՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՆԵՆԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հենց այդ պատճառով էլ ցանկանում ենք հայտարարել մորատորիում եւ դիմել իրավապահ մարմիններին՝ քարոզարշավի ընթացքում առավելագույնս խուսափել այն անձանց ազատության օրինական սահմանափակու.մներից, ովքեր ակտիվորեն ներգրավված են նախընտրական քարոզարշավում»,- նշեց վարչապետը:

Միաժամանակ, վարչապետը լրատվամիջոցներին քարոզարշավի օբյեկտիվ եւ անկողմնակալ լուսաբանման կոչ արեց:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին դրական գնահատեց իրավական ընթացակարգերի մորատորիումի հայտարարման մասին վարչապետի նախաձեռնությունը: «Նշեմ, որ նման մորատորիում էր հայտարարվել նաեւ նախագահական ընտրությունների ժամանակ, եւ մենք համոզվեցինք, որ այն ժամանակ ձեռնարկած միջոցներն արդյունավետ էին: Անցյալ տարի մենք անցկացրինք աննախադեպ բաց եւ մրցունակ ընտրություններ: Այն ժամանակ ձեռնարկված միջոցները ցույց տվեցին, որ այդ ուղղությամբ քայլերն արդարացված են»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԿԸՀ-Ն ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լրիվությամբ պատրաստ է տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացման համար: Այդ մասին հայտարարեց ԿԸՀ նախագահ Թամար Ժվանիան: «Ընտրությունները պետք է անցկացվեն խաղաղ իրավիճակում: Ընտրվելու է 71 սակրեբուլո, ընդհանուր առմամբ՝ 2088 պատգամավոր, 12 քաղաքների քաղաքապետ եւ 59 մունիցիպալիտետի վարչության նախագահ: Ընտրական վարչակազմը լրիվությամբ պատրաստ է ընտրությունների համար»,- նշեց Թամար Ժվանիան:

ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Տեղական ընտրությունների անցկացման պաշտոնական ամսաթվի հրահպարակմամբ մեկնարկեց նախընտրական քարոզարշավը: Երկրի քաղաքական առաջատար կուսակցություններն ու ձեւակերպված դաշինքները առաջադրում են Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուների:

ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Ապրիլի 14-ին Վրաստանի տարածաշրջանների զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Նարմանիան հայտարարեց իր զբաղեցրած պաշտոնը թողնելու մասին: Նա հունիսի 15-ին կայանալիք ընտրություններում կառավարող «Վրացական երազանք» կոալիցիայից առաջադրվել է Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու:

Նարմանիան պաշտոնաթողության վերաբերյալ որոշումը հրապարակեց Վրաստանի նախարարների կաբինետի նիստում: «Ցանկանում եմ կառավարության բոլոր անդամներին շնորհակալություն հայտնել բեղմնավոր աշխատանքի եւ աջակցության համար, որը ես զգացել եմ 1,5 տարի նախարար աշխատելու ընթացքում»,- նշեց նա:

Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նախարարի պաշտոնում Նարմանիայի աշխատանքը որակեց արդյունավետ եւ վստահություն հայտնեց, որ, Թբիլիսիի քաղաքապետ ընտրվելու դեպքում, «նա հաջողությամբ կլուծի Վրաստանի մայրաքաղաքի առջեւ ծառացած խնդիրները»:

«ՆՈՐ ԱՋԵՐԸ» ԵՎ «ԱԶԱՏ ՎՐԱՍՏԱՆԸ» ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՀԱՄԱՏԵՂ

Տեղական ինքնակառավարման ընտրություններում «Նոր աջերը» եւ «Ազատ Վրաստանը» կմասնակցեն համատեղ, եւ Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու են առաջադրում «Ազատ Վրաստանի» ղեկավար Կախա Կուկավային: «Գիտակցելով երկրում ստեղծված ծանր իրավիճակը՝ մենք՝ «Նոր աջերս» եւ «Ազատ Վրաստանը» սկսում ենք բաց դռների սկզբունքով գործընթացը: Ընտրություններին մենք կմասնակցենք միասին, եւ մեր դաշինքի դռները բաց են բոլորի համար»,- հայտարարեց «Նոր աջերի» նախագահ Փիքրիա Չիխրաձեն:

«ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ» ՍԿՍՈՒՄ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

«Ազգային շարժումը» իր նախընտրական քարոզարշավն անցկացնելու է «Միասին առաջ մղենք կանգնեցված Վրաստանը» կարգախոսով: Այդ մասին հայտարարեց Նուգզար Ծիկլաուրին: «Վրացական երազանքի» խոսքն ու գործը, նրանց խոստումները եւ խոստացածի կատարումը կտրականապես միմյանցից տարբերվում են, իսկ կառավարության հայտարարություններն ու գործունեությունը սպառնալիք են ստեղծում քաղաքացիական խաղաղությանն ու կայունությանը: Չնայած ստեղծված իրավիճակին, «Ազգային շարժումը» սկսում է իր քարոզարշավը»,- հայտարարեց Նուգզար Ծիկլաուրին:

Նշենք, որ «Ազգային շարժման» կողմից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու է առաջադրվել Նիկա Մելիան:

ԱՎԱՆԴԱՊԱՀՆԵՐԸ ՄԻԱՅԱՆ ԲՈՒՐՋԱՆԱՁԵԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Վրաց ավանդապահների միությունը ներգրավվում է «Բուրջանաձե-Միասնական ընդդիմություն» դաշինքի քարոզարշավում: Ինչպես հայտարարեց կուսակցության գլխավոր քարտուղար Գոչա Մամացաշվիլին, «Երբ խորհրդարանական կուսակցություններն զբաղված են հարաբերությունների ճշտմամբ, իսկ երկիրը կանգնած է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին մեծ մարտահրավերների առջեւ, կարեւոր է ստեղծել հզոր ընդդիմական միասնություն, ինչն էլ հանդիսանում է վրաց հասարակայնության պատվերը: Հենց այդ պատճառով էլ մենք միանում ենք «Բուրջանաձե-Միասնական ընդդիմություն» կոալիցիային»,- հայտարարեց Մամացաշվիլին եւ հավելեց, որ իրենք լիարժեք աջակցություն կցուցաբերեն դաշինքի կողմից Թբիլիսիի քաղաքապետի թեկնածու առաջադրված Դիմիտրի Լորթքիփանիձեին:

ՆԻՆՈՇՄԻՆԴԱ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ԻՄ ՆՊԱՏԱԿՆ Է, ՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՍ ԼԱՎ ՏԻՐԱՊԵՏԵՆ ՎՐԱՅԵՐԵՆԻՆ»

Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցում վրաց լեզու են դասավանդում մի քանի ուսուցչուհի (ի դեպ, բոլորն էլ այս դպրոցի նախկին սաներն են), որոնց նպատակն է իրականացնել «Վրաց լեզուն՝ ապագա հաջողության գրավական» ծրագիրը:

Ներկա պայմաններում լեզու գիտենալը խիստ անհրաժեշտ է (իմաստուններից մեկը ասել է «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես»): Ինչ խոսք, անձամբ ես, որպես մայրենի լեզվի ուսուցչուհի, նախապատվությունը տալիս եմ հայոց լեզվին, բայց միեւնույն ժամանակ գլխավոր առարկաներից մեկն է համարվում եւ վրացերենը՝ մեր պետական լեզուն: Ըստ իս, վրացերենի ուսուցումը բարդ գործընթաց է, բայց, միաժամանակ, ընդգծում եմ վրացերենի մեծ կարեւորությունն ու դերը, նրա նշանակությունը մեր առօրյա կյանքում: Վրաստանում ապրող յուրաքանչյուր մարդ շատ լավ պիտի ըմբռնի, թե ինչու պիտի լավ սովորի ու գիտենա պետական լեզուն եւ, համապատասխան կրթություն ստանալուց հետո, ինչ առավելություններ կարող է ունենալ տարբեր բնագավառներում:

Մեր զրուցակիցն է դպրոցում եւ տարածաշրջանում, նաեւ կասեի երկրում ճանաչված վրաց լեզվի մասնագետ, փորձառու ուսուցչուհի Անի Մոսոյանը:

- ***Նախ, շնորհավորում եմ «Վրաց լեզվի օրվա» կապակցությամբ:***

- Շնորհակալություն, մենք՝ դպրոցի վրաց լեզվի ուսուցիչներս, մեր ամենօրյա աշխատանքով անում ենք ամեն ինչ, որպեսզի մեր երեխաները լավ իմանան վրացերենը:

- ***Տիկին Անի, մի քիչ պատմեք Ձեր մասին.***

- Արդեն քսան տարի է, ինչ աշխատում եմ քաղաքի թիվ 3 հանրային դպրոցում եւ սիրով ու պատասխանատվությամբ եմ դասավանդում վրաց լեզուն: Մասնագիտությամբ նաեւ հոգեբան եմ, որը եւ, հավանաբար, օգնում է ինձ դասավանդման ընթացքում հաջողության հասնել, սաներիս սիրել տալ պետական լեզուն:

- ***Ինչպիսի՞ տրամաբանությամբ սկսեցիք ուսումնական տարին, կանխամտածված ինչպիսի՞ ծրագրեր ունեիք:***

- Ուստարին սկսեցի մեծ խանդավառությամբ: Մտածում էի, թե ինչպես է ընկալվելու սաներիս կողմից նոր դասագրքերի հաջորդ աստիճանը: Իմ նպատակն է աշակերտներին սովորեցնել այնպես, որ նրանք կարողանան յուրացնել առարկան, որ տիրապետեն վրացերենին, ընդունվեն Վրաստանի բուհեր, որ ապագայում իրենց զգան երկրի արժանի ու լիարժեք քաղաքացիներ:

- ***Ինչպիսի՞ միջոցներ են ձեռնարկվել վրաց լեզվի ուսուցումը արդյունավետ դարձնելու համար:***

- Տարիների ընթացքում միշտ էլ արդիական է եղել ու մնում է կրթական նոր մեթոդների կիրառումը եւ նոր տարատեսակ դասագրքերի կազմումը, որոնք ավելի դյուրին ու արդյունավետ են դարձնում վրացերենի ուսուցումը: Ըստ իս, ուսուցման կարեւոր օղակն ուսուցիչն է, նրա իմացության մակարդակը, նրա անհատական մոտեցումը: Ուսուցիչն ինքն է ընտրում այն ճանապարհը, որով սիրելի ու մատչելի է դարձնում դասավանդվող առարկան, տվյալ դեպքում՝ վրաց լեզուն: Ինչ խոսք, սրան օժանդակում են նաեւ կրթական նոր ձեռնարկները: Պետական լեզվի ուսուցման ընթացքում հաճախ կիրառում եմ ինֆորմատիկ-տեխնիկական միջոցներ՝ համակարգիչներ, որոնց օգնությամբ աշակերտները լրացուցիչ տեղեկություններ են ստանում թեմայի վերաբերյալ, կարծիքներ փոխանակում վրաց լեզվով: Արդյունավետ միջոց է աշակերտների բանավոր խոսքի զարգացումը: Սրան նպաստում է համապատասխան վրացախոս միջավայրը:

- ***Տիկին Անի, որպես վաստակաշատ ուսուցչուհի, փորձո՞ւմ եք օգնել Ձեր դպրոցի մյուս սկսնակ ուսուցիչներին, որոնք Ձեր նախկին սաներն են նաեւ:***

- Սիրով եւ հաճույքով եմ օգնում նրանց, ովքեր դիմում են ինձ, ծանոթացնում ուսուցման նոր մեթոդներին:

Անկեղծ ասած, ինքս շատ հաճախ ականատես եմ լինում այն հանգամանքին, որ վրաց լեզվի մյուս ուսուցչուհիները սիրով են համագործակցում մանկավարժի հետ, որ կարողանան մայրենիի նման ուսուցանել վրացերենը: Ձգտում են, պետական լեզուն ոչ միայն սովորեցնել իրենց սաներին, այլեւ սեր ներարկել վրացերենի նկատմամբ (երբեք չմոռանալ նաեւ մայրենին), ծանոթացնել վրաց մշակույթին, որպեսզի նրանք իրենց զգան մեր երկրի լիարժեք քաղաքացիներ, որպեսզի ապագայում լեզվի չիմացության պատճառով դժվարությունների չհանդիպեն:

ԺԵՆՅԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

ՎՐԱՅ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆ՝ ՋԱՄԼԵՏ ԽՈՒԽԱՇՎԻԼԻՆ 70 ՏԱՐԵԿԱՆ

Լրացավ ճանաչված վրաց մարզական մեկնաբան, բասկետբոլի հայտնի մարզիչ եւ հասարակական գործիչ Ջամլետ Խուխաշվիլու 70-ամյակը: Ապրիլի 13-ին միաժամանակ նշվեց նաեւ Ջամլետ Խուխաշվիլու լրագրական, մարզական մեկնաբանի գործունեության 50-ամյակը: Նշենք, որ նա ճանաչված դերասան եւ մարզական մեկնաբան Կոտե Մախարաձեի աջակցությամբ մարզական մեկնաբանի գործունեությունն սկսեց 1964 թվականի ապրիլին:

Եվ սկսած այդ օրվանից մինչեւ օրս Ջամլետ Խուխաշվիլին իր մարզական մեկնաբանությունների բացառիկությամբ ուրախություն է պատճառում միլիոնավոր հեռուստադիտողների: Նրա մեկնաբանությունները աչքի են ընկնում տվյալ մարզաձեւի նրբությունների խոր իմացությամբ, մասնագիտական վերլուծությամբ ու պարզաբանումներով:

Ճանաչված մարզական մեկնաբանի հոբելյանական երեկոն անցկացվեց Թբիլիսիի Մարջանիշվիլու անվան ակադեմիական թատրոնում: Այստեղ էին գտնվում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության անդամները եւ օրենսդրական մարմնի պատգամավորները:

Ներկաների թվում էր նաեւ Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին:

Միջոցառմանը խոսելով հոբելյարի մասին, ելույթ ունեցողներն առաջին հերթին ընդգծում էին Ջամլետ Խուխաշվիլու հարուստ բառապաշարն ու մեկնաբանությունները հստակ եւ ձեւավորված նախադասություններով ներկայացնելու նրա բացառիկ ունակությունը:

Ջամլետ Խուխաշվիլուն շնորհավորական ուղերձ հղեց Հայաստանի մարզական լրագրողների ասոցիացիան: Հոբելյարին շնորհավորեցին նաեւ օլիմպիական խաղերի չեմպիոն Ռաֆայել Չմշկյանը, ռադիո «ՋԱԿՈ»-ի գլխավոր տնօրեն Միխեիլ Տարախչյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ÎðàÜ²Î²Ü

ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ (ՄԵՌԵԼՈՑ)

Խնդրում եմ նշեք, եկեղեցական տոնացույցով ո՞ր օրերն են նվիրվում հանգուցյալների հիշատակին:

Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թբիլիսի

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին բոլոր հանգուցյալների համար հոգեհանգստյան արարողություններ է կատարում հինգ Տաղավար տոների՝ Սբ.Ծննդի, Սբ.Հարության՝ Զատիկի, Քրիստոսի Պայծառակերպության՝ Վարդավառի, Աստվածածնի Վերափոխման եւ Խաչվերացի հաջորդող օրերին, որոնք կոչվում են ննջեցյալների հիշատակության օր (մեռելոց): Տաղավար տոներից միայն Սուրբ Ծնունդն է, որ շարժական չէ, նշվում է հունվարի 6-ին: Մյուս 4 տոները շարժական են եւ ամեն տարվա համար որոշվում են առանձին:

Նույն ընթացակարգն է նաեւ Վրաց Ուղղափառ եկեղեցում, որտեղ կրոնական բոլոր տոների հաջորդ օրը հանգուցյալների հիշատակի օր է:

ÆÜøÜ²´àôÄàôØ

ԻՆՔՆԱՆԵՐԸՆՉՈՒՄ (ԱՈՒՏՈԹՐԵՅՆԻՆԳ)

Լսել եմ, որ ինքնաներշնչմամբ կարելի է բուժել տարբեր հիվանդություններ եւ, հավանաբար, պատահական չէ, որ բժիշկներն ու հոգեբաններն այդքան մեծ ուշադրություն են հատկացնում այդ հարցին: Իսկ ինչպե՞ս կարելի է հասնել դրան:

Գ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Նինոծմինդա

Եթե դուք թեկուզ չնչին չափով տագնապի, անվստահության, մտահոգության զգացողություններ ունեք, ապա ամեն առավոտ անկողնում, երբ դեռ լիովին չեք արթնացել, աչքերը փակ վիճակում 2-3 րոպե ինքնաներշնչման սեանս անցկացրեք:

1. Երկու անգամ կրկնեք. «Իմ ուղեղը դեռեւս ննջած է, բայց այն շատ լավ ընկալում է բառերով արտահայտված ինքնաներշնչանքը»:

2. Ուշադրություն դարձրեք ներշնչմանն ու արտաշնչմանը, արտաշնչելուց հետո մի փոքր դադար տվեք: Դրանց զուգահեռ մտքում 3 անգամ կրկնեք՝ «Ներշնչում, արտաշնչում, դադար»: Այնուհետեւ շարունակեք այդպես շնչել, բայց առանց դադարների, երկարատեւ եւ թույլ արտաշնչելով բերանով: Պատկերացրեք, որ արտաշնչելու հետ դուրս են գալիս տհաճ զգացմունքներն ու մտքերը: Արտաշնչելու ժամանակ արտաբերեք՝ «Ինձնից հեռանում են անվստահությունը, վախը, մտահոգությունը»: Կրկնեք 5-10 անգամ:

3. Այժմ կիսաշշուկ ասեք. «Իմ նյարդային համակարգը միանգամայն պատրաստ է ներշնչման», եւ շշուկով կրկնեք նախապես սովորած արտահայտությունները. «Ես հավատում եմ իմ օրգանիզմի պաշտպանական ուժերին»:

«Ես դառնում եմ ավելի բարեհամբույր, բարյացակամ, ակտիվ», «Ես երջանիկ եմ, ամեն ինչ լավ է լինելու»:

Այս ամենը արտաբերեք փակ աչքերով 10-ական անգամ: Հաշվեք մատներով կամ պարանի վրա հանգույցներ գցելով: Շնչառությունը պետք է լինի մակերեսային, ակամայից, այսինքն՝ թեթեւ ու հանգիստ:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՀԻՄՆԱՔԱՐԸ

Մարմնի առողջության համար ամենագլխավոր նախապայմանը հոգու առողջության պահպանումն է:

Բոլոր հիվանդությունների զարգացման համար ամենապարարտ հողը նախապատրաստվում է այն ժամանակ, երբ մարդը կորցնում է հոգեկան անդորրը: Այնինչ երջանկության զգացողությունը կարող է մարդու համար միանգամայն սովորական վիճակ լինել: Ուղղակի պետք չէ առաջնորդվել «ժամանակը կգա, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի» սկզբունքով: Եթե դուք երջանկության հասնելու այդ ուղին եք բռնել, ուրեմն շատ շուտով կբախվեք հիասթափության: Լիովին ձերբազատվեք նախանձի, չարի, ստի, խարդավանքների ցանցից:

Երջանիկ զգալու համար հարմար պահի՞ եք սպասում... Այդ դեպքում շատ հնարավոր է, որ ամբողջ կյանքում նույն կայարանում մնաք, իսկ երջանկության գնացքը սուրալով անցնի ձեր քթի տակից: Դուք հենց հիմա կարող եք երջանիկ լինել: Նույն գործողություններն անդադար կրկնելու միջոցով ամեն ինչ կարելի է սովորության վերածել: Դա վերաբերում է նաեւ երջանկության զգացողությանը: Առողջությունը սկսվում է հենց այստեղից: Հետեւաբար միշտ հիշեք. հիվանդությունները կանխարգելելու առաջին եւ կարեւորագույն քայլերից մեկը հոգու անդորրն ու առողջությունը պահպանելն է:

ՏՈՆԱԿԱՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՍԵՂԱՆՆ ՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Զատիկին սիրով ու սպասումով են պատրաստվում: Այն մեծ խորհուրդ ունի, վերածնունդ խորհրդանշող այս տոնը նաեւ մարդու հոգեկան վերածնունդ է խորհրդանշում: Իսկ խոհանոցում տոնական ուտեստներին նախորդում են պասուց ուտելիքները:

Զատկի սեղանի ամենակարեւոր բաղադրիչն է ներկված ձուն: Թեեւ իրականում ձվերը պետք է ներկել կարմիր՝ որպես Հիսուսի թափած արյան խորհրդանիշ, բայց մեզանում ներկերի ու զարդարանքների բազում տարբերակներ են ընդունված: Բացի ավանդական ձեւով՝ սոխի կեղեւով, սուրճով, զաֆրանով ներկած ձվերից կարելի է նաեւ այլ եղանակով զարդարած ձվեր դնել սեղանին: Արդեն խաշած ձուն կարելի է զարդարել սովորական գուաշով: Կարելի է պատկերել խաչ, բարեմաղթանք գրել, զարկ տալ երեւակայությանը: Կարելի է ձուն զարդարել ժապավենով, փետուրներով, գույնզգույն թելերով:

Զատիկի սեղանը Զատկի տոնի կապակցությամբ քրիստոնյաների կողմից զարդարվում է ավանդական կերակրատեսակներով:

Ընդհանրապես, զատկական սեղանին ունենում են պասկա, որի շուրջն ափսեի մեջ են երբեմն շարվում ներկված ձվերը: Բողոքական քրիստոնյաների մոտ ընդունված են նաեւ շոկոլադե ձվիկները:

Զատիկ կիրակվա նախորդ գիշերը, զատկական սեղանին լինում են եփած ձուկ, չամիչով փլավ եւ գինի: Չամիչով փլավը մեկնաբանվում է որպես ողջ մարդկության խորհրդանիշ, որտեղ չամիչը՝ հավատացյալներն են, գինին՝ Հիսուսի արյունը: Երբեմն սեղանին ունենում են ծխացրած ձուկ, քուքու, փլավ եւ երբեմն նաեւ սալորի խոռիշտ (շոգեխաշած սոուսի տեսակ), որի մեջ կարմիր միս չեն օգտագործում: Գինին լցվում է մի կտոր նշխարի վրա, որպեսզի թաթախվի: Նշխարը խորհրդանշում է Հիսուսի մարմինը, իսկ գինին՝ արյունը, ինչպես Վերջին ընթրիքի ժամանակ:

Զատիկ կիրակի եկեղեցու բակում եւ նաեւ Զատկի շրջակա օրերին, մանուկները (եւ երբեմն էլ մեծերը) «հավկիթ են խաղում»: Այս խաղը տեղի է ունենում երկու հոգու միջեւ՝ մեկը պահում է մեկ ներկված հավկիթ, մեկ ծայրը դեպի վեր, մյուսն իր ներկված հավկթի նույն ծայրը (սուր կամ լայն) արագ իջեցնում է եւ խփում մյուսի հավկթին: Հետո խաղը կրկնվում է նույն հավկիթների մյուս ծայրերով, բայց այս անգամ առաջինն է իջեցնողը եւ երկրորդը՝ պահողը: Ում հավկիթը, որ չի կոտրվում, նա հաղթում է, եւ հաղթվածն իր հավկիթը տալիս է իրեն: Եթե ամեն հավկթի մի ծայրն է կոտրվում, ապա մեկ անգամ եւս խաղում են հավկիթների անվնաս ծայրերով, որպեսզի որոշվի հաղթողը:

ՆԵՐԿԵՆՔ ՁՎԵՐԸ ԲՆԱԿԱՆ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Ավանդաբար ընդունված է զատիկին ձուն ներկել կարմիր գույնով: Այն, ինչպես եւ զատկի գինին, խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Զատկի սեղանին ձկան, լավաշի, չամիչով փլավի ու գինու հետ միշտ կան ներկված ձվեր: Երբեմն ձուն նաեւ այլ գույներով են ներկում, զարդարում են գույնզգույն ժապավեններով ու թելերով:

Ներկելու համար պետք է վերցնել չվնասված կճեպով ձվեր: Կարմիր ներկելու համար անհրաժեշտ է կարմիր սոխի կեղեւը, որը նախապես՝ Զատիկից մեկ-երկու շաբաթ առաջ պետք է սկսել հավաքել: Որքան շատ է սոխի կեղեւը, այնքան մուգ կներկվի ձուն: Նախքան ձուն եփելը, սոխի կեղեւը պետք է եփել մոտ կես ժամ: Թողնել եփուկը հովանա: Ձվերը լվանալ, մոտ մեկ ժամ թողնել աղաջրի մեջ, որ եփելիս չճաքեն: Մաքուր ձվերը զգուշորեն դնել սոխի կեղեւի եփուկի մեջ, եփել սովորականից երկար: Որպեսզի եփված ձվերը փայլեն, դրանք լավ չորացնում են եւ ձեթ քսում:



Սուրբ Զատկի տոնին երեխաների համար ամենազվարճալի ու հետաքրքիր պահը ձուն ներկելն ու ներկած ձուն ուտելն է: Կան բազմաթիվ տարատեսակ ներկեր, սակայն նախընտրելին բնական ներկանյութերն են: Չնայած այդ ներկերը նախատեսված են սննդի մեջ օգտագործելու համար, այնուամենայնիվ, կարող են վնասել փոքրիկների առողջությանը: Իսկ ի՞նչ անել, եթե չեք ուզում վնասել Ձեր եւ Ձեր երեխայի առողջությանը: Ահա մի քանի խորհուրդ, թե ինչպես կարող եք ներկել ձուն առանց քիմիական հավելումների:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Ես բամբասողին չեմ ատում այնքան, որքան որ՝ նրան հավատացողին:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ (1936-2013)

Հայ երգիծաբան

Դժվար է, երբ ծարավին աղի ջուր է հանդիպում:

ԲԵՍԻԿԻ (1750-1791)

Վրաց բանաստեղծ

Մարդը պրակտիկայում պետք է ապացուցի իր մտածողության ճշմարտացիությունը, այսինքն՝ հզորությունն, իրական լինելն ու այսկողմանիությունը:

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ (1818-1883)

Գերմանացի փիլիսոփա

Այնպես անել, ինչպես դու, չեմ ուզում, իսկ ավելի լավ անել չեմ կարող:

ՄԻՔԵԼԱՆՋԵԼՈ (1475-1564)

Իտալացի քանդակագործ

Խելացին շատ բան է կարողանում սովորել թշնամուց:

ԱՐԻՍՏՈՖԱՆ (մ.թ.ա. 446 - մ.թ.ա. 387), Հին հույն կատակերգակ

Ինչպիսի գարեջուր պատրաստես, այնպիսին էլ կխմես:

ԲԵՆ ՋՈՆՍՈՆ (1572-1637)

Անգլիացի բանաստեղծ

Մեր կատարածից ոչինչ անհետ չի չքանում բառիս ստույգ, գիտական իմաստով:

ՈՒԻԼՅԱՄ ՋԵՅՄՍ (1842-1910)

Ամերիկացի փիլիսոփա

Անգամ գյուղացին, երբ ուզում է անգործություն անել, ժամանակին է վեր կենում, որպեսզի այդ բանը սկսի ավելի վաղ անել:

ՀՈՈՒ (1819-1867)

Ամերիկացի գյուտարար

Աշխատասեր մարդը միշտ գտնում է, որ իր աշխատանքը տակավին ավարտված չէ:

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ «Վրաստանի» ընթերցող

²ÜºÎ¸à¶ÜºðÜ

** Երբ կինն ասում է հագնելու բան չունեմ, նշանակում է՝ նոր շորերն են վերջացել:*

Երբ տղամարդն է ասում հագնելու բան չունեմ, նշանակում է՝ մաքուր շորերն են վերջացել:

** - Բժի՛շկ, նիհարելու համար ձեր խնձորի դիետան ինձ բոլորովին չի օգնում:*

- Իսկ դուք խնձորները լվանո՞ւմ եք:

- Այո՛:

- Փորձեք չլվանալ:

** Լավ է լինել խիզախ: Բայց սարսափելի է...*

** - Ալո՛, ասացե՛ք, իսկ ինչո՞ւ է ձեր հակավիրուսը այդքան երկար ստուգում ֆիլմը:*

- Իսկ ինչպե՞ս էիք դուք ցանկանում: Չէ՞ որ նա ֆիլմը դիտում է:

** - Աղջի՛կս, եթե լավ սովորես, քեզ համար համակարգիչ կգնենք:*

- Իսկ եթե վա՞տ սովորեմ:

- Այդ դեպքում դաշնամուր կգնենք:

** Հոգեբանները պնդում են, որ լավ տրամադրության համար հարկավոր է ամեն օր գրկել ութ մարդու: Կամ էլ... խփել մեկի մռութին:*

** - Ճի՞շտ է, որ ձեր աղջկան ամուսնացնում եք:*

- Այո, մի շաբաթից:

- Իսկ փեսացուն գիտի՞, որ նրա մի աչքը ապակուց է:

- Ուզում ենք անակնկալ անել...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ՝ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի նորանշանակ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ անցկացվեց Հայաստանի կառավարության նիստը: Կառավարության նիստին ներկա էին Հայաստանի նախագահի հրամանագրով արտաքին գործերի ու պաշտպանության նախարարի պաշտոնում վերանշանակված Էդվարդ Նալբանդյանն ու Սեյրան Օհանյանը:

Նիստի օրակարգում ներառված էր 30 հարց: Հարցերի քննարկման ժամանակ վարչապետ Հովիկ Աբրահամյանն անդրադարձավ երկրում փոքր եւ միջին բիզնեսի զարգացման հարցին. «Շատ մեծ քայլեր ենք կատարելու, որպեսզի բիզնես դաշտում ապահովենք մեծ ներդրումների հնարավորություն յուրաքանչյուր գործարարի համար: Պետությունն իր բոլոր լծակներով պետք է աջակցի, որպեսզի այն գործարարը, որն իր բիզնեսն իրականացնելու է օրենքի շրջանակում, որեւէ կառույցից որեւէ խոչընդոտ չստանա: Դա սկզբունքային որոշում է լինելու նաեւ իմ կողմից»,- հայտարարեց վարչապետը:

Կառավարությունը քննարկել է նաեւ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացում կատարելու օրենքի նախագիծը: Վերը նշված օրենքների նախագծերը եւ կառավարության եզրակացությունները սահմանված կարգով կներկայացվեն Հայաստանի Ազգային ժողով:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԴՐՎԵԼԻՔ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ապրիլի 15-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ անցկացվեց մարզերի խնդիրներին նվիրված խորհրդակցություն:

Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար Արմեն Գեւորգյանը վարչապետին է զեկուցել կառավարության կողմից մարզերում իրականացվող ծրագրերի մասին:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաեւ գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող աջակցությունը, մասնավորապես, պարարտանյութի, դիզվառելիքի, սերմացուի տրամադրման աշխատանքների ընթացքին առնչվող հարցեր:

Վարչապետը պահանջել է իրավասու մարմիններից՝ բոլոր ծրագրերով անվերապահորեն ապահովել աշխատանքների բարձր որակ եւ նշել, որ այդ հարցը գտնվելու է իր ուշադրության կենտրոնում:

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի սփյուռքի նախարարությունում սփյուռքի նախարարի պաշտոնակատար Հրանուշ Հակոբյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը ստորագրել են թվով երկրորդ հուշագիրը: Նոր հուշագրով կողմերի միջեւ համագործակցության շրջանակն ընդլայնվում է:

Համագործակցության շրջանակներում հայկական կրթական ծրագրեր կիրականացվեն սփյուռքի հայկական ազգային կրթական կառույցներում, մեկօրյա (կիրակնօրյա) դպրոցներում, մշակութային եւ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններում: Նախատեսվում է սփյուռքի հայկական դպրոցներին ապահովել ուսումնական եւ ուսումնաօժանդակ գրականությամբ, իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր, սփյուռքի մտավոր ներուժի բացահայտման նպատակով ՀՀ ԳԱԱ-ի, ստեղծագործական, մասնագիտական միությունների հետ համատեղ կազմակերպել մասնագիտական համաժողովներ, կլոր սեղաններ, հավաք-հանդիպումներ:

Համայնքային կառույցներին աջակցելու նպատակով մշակվելու եւ իրականացվելու են համատեղ ծրագրեր՝ ուղղված հայկական համայնքների ինքնակազմակերպման ու կայացման հիմնախնդիրների լուծմանը, միջհամայնքային համագործակցության ամրապնդմանը:

Կողմերը վերահաստատել են պատրաստակամությունը՝ շարունակել համագործակցությունը «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխության իրականացման գործում:

ՏՈՒԳԱՆՔ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն բոլոր այն վարորդներին, որոնց մեքենաների ԱՊՊԱ պայմանագրի ժամկետն ավարտվել է կամ մոտենում է ավարտին, տուգանքներից խուսափելու համար հորդորում է նոր ԱՊՊԱ պայմանագիր կնքել:

Տարածված հաղորդագրության մեջ ասվում է, որ Հայաստանի տարածքում հաշվառված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (վարձակալի) կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր չունենալը, որը տեւել է ավելի քան տասն օր՝ առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր տասն օրվա համար՝ 5. 000 ՀՀ դրամի չափով, սակայն յուրաքանչյուր տարվա համար՝ ոչ ավելի, քան 100. 000 հայկական դրամի չափով:

Առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու, ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100. 000 հայկական դրամի չափով:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

«Օրինաց երկիր» կուսակցությունը խնդրահարույց եւ ոչ նպատակահարմար է համարում Հայաստանի Հանրապետական կուսակցության հետ կոալիցիոն կառավարության մաս կազմելը: Կոալիցիոն կառավարության մաս կազմելու կամ չկազմելու հարցի առնչությամբ վերջնական գնահատականը ապրիլի 25-ին կհայտնի ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը: Այդ մասին ապրիլի 16-ին ՕԵԿ քաղխորհրդի նիստից հետո նշեց «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ Մհեր Շահգելդյանը՝ ներկայացնելով քաղխորհրդի որոշումը:

«Օրինաց երկիր» կուսակցության քաղաքական խորհուրդը որոշում է՝ առաջին՝ «Օրինաց երկիր» կուսակցության՝ քաղաքական կոալիցիային հետագա անդամակցության հարցը համարել խնդրահարույց եւ ոչ նպատակահարմար: Երկրորդ՝ հաշվի առնելով, որ կոալիցիայում «Օրինաց երկիր» կուսակցությունը գործունեության հետագա շարունակումը դիտարկում է խնդրահարույց եւ ոչ նպատակահարմար, ՕԵԿ քաղաքական խորհուրդը բավարարեց «Օրինաց երկիր» կուսակցության նախարարներ Արմեն Երիցյանի, Սերգո Կարապետյանի եւ Սամվել Թադեւոսյանի դիմումները կուսակցությունից դուրս գալու մասին, հաջողություն մաղթեց նրանց իրենց հետագա գործունեության մեջ»,- նշեց Շահգելդյանը: Քաղխորհրդի որոշումն ընդունվել է միաձայն:

Հայաստանի գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը դուրս է եկել «Օրինաց երկիր» կուսակցությունից: Այս մասին Կարապետյանը հայտարարեց՝ մեկնաբանելով լուրերն այն մասին, որ նախարարի պաշտոնակատարը որոշել է դուրս գալ կուսակցությունից՝ պայմանավորված կոալիցիոն համագործակցությունը դադարեցնելու ՕԵԿ որոշմամբ: «Երբ 2010 թվականի դեկտեմբերին առաջարկություն ստացա զբաղեցնել Հայաստանի գյուղատնտեսության նախարարի պաշտոնը եւ անդամագրվեցի «Օրինաց երկիր» կուսակցությանը, ՕԵԿ-ը դիտում էի որպես Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանի քաղաքական թիմի մի մաս եւ պատրաստ էի իմ աշխատանքով նպաստել Սերժ Սարգսյանի գլխավորած քաղաքական թիմի հաջողություններին: Սա է պատճառը, որ երբ ապրիլի 16-ին, ՕԵԿ քաղխորհրդի նիստի ժամանակ, կուսակցությունը որոշեց դուրս գալ կոալիցիայից, ես չկիսելով այդ քաղաքական մտադրությունը եւ անկախ իմ հետագա պաշտոնավարումից, դուրս եմ եկել «Օրինաց երկիր» կուսակցությունից»,- ասաց Սերգո Կարապետյանը:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը 2013 թվականի ապրիլի 1-ից հուլիսի 6-ն ընկած ժամանակահատվածում անապահով ընտանիքների կողմից օգտագործված գազի սուբսիդավորման ծրագրի շրջանակում «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը կփոխհատուցի 115.7 միլիոն դրամ: Նշված ժամանակահատվածում սոցիալապես անապահով ընտանիքների համար 1խմ գազի գինը, կառավարության սուբսիդավորմամբ, 132 դրամի փոխարեն սահմանվել է 100 դրամ:

Նշված տարբերությունը կառավարությունը փոխհատուցում է Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի պետական ընկերությունների վերազինման, օպտիմալացման եւ բարեփոխումների արդյունքում առաջացող շահույթի հաշվին: Համապատասխան նախագիծն ընդգրկված է կառավարության ապրիլի 17-ի նիստի օրակարգում:

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՊԱՆԻՐԻ ԳՆԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Հայաստանում կաթի արտադրության սեզոնային աճը առաջիկա ամիսներին կհանգեցնի կաթնամթերքի եւ պանրի գնի նվազման: Այդ մասին հայտնեց Հայաստանի գյուղատնտեսության նախարարության անասնաբուծության եւ անասնաբուժության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը: Նա հիշեցրեց կաթնամթերքի եւ պանրի արտադրության ծավալների սեզոնային տատանումների մասին: «Շուտով արդեն մեր ներքին շուկան կհարստանա պանրի տեսականիներով, եւ ենթադրում եմ, որ որոշակիորեն կնկատվի կաթնամթերքի եւ պանրի գնանկում. մոտավորապես 10 տոկոսով պանրի գինը շուկայում կնվազի»,- ասաց Հովհաննիսյանը: Նա հայտնեց, որ Հայաստանում օրական արտադրվում է 1700-1750 տոննա կաթ:

ՄԵԿՆԱՐԿԵԺ «ԳՐՔԱՐՎԵՍՏ 2014» ՄՐՑՈՒՅԹԸ

Գրահրատարակչական արտադրանքի մշակույթի բարձրացման, գրքարվեստի զարգացման եւ գրքի միջոցով մշակութային եւ հոգեւոր արժեքների տարածումը խթանելու նպատակով, Հայաստանի մշակույթի նախարարությունը հայտարարում է «Գրքարվեստ 2014» մրցույթի մեկնարկը: Մրցույթն անց է կացվելու «Գիրք երեխաներին», «Արվեստի գիրք», «Գիտություն եւ կրթություն», «Իմ հայրենիքը», «Մեկ դար անց», «Հաղթանակ», «Լավագույն ֆեւավորում» եւ «Գլխավոր մրցանակ» անվանակարգերում: Մրցույթին կարող են ներկայացվել 2013թ. ընթացքում եւ մինչեւ մրցույթի ծանուցման հրապարակումը Հայաստանում հրատարակված գրքերը՝ ըստ անվանակարգերի, երկուական օրինակով, որոնք ենթակա չեն վերադարձման եւ վճարման: Հրատարակությունների ներկայացման վերջնաժամկետը 2014թ. մայիսի 2-ն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՊՐՈՑՆԵՐԸ՝ «Dasaran.am» ԾԱՆՑՈՒՄ

«Dasaran.am» կրթական ծրագիրը չորս տարվա համառ աշխատանքի արդյունքում արդեն իր կանցում ընդգրկում է Հայաստանի բոլոր 1400 դպրոցները: Կրթական ծրագրի կանցիից օգտվում է 843.300 մարդ՝ տնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ եւ ծնողներ: «Dasaran.am» կրթական ծրագիրը վայելում է ՀՀ ԿԳ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությունը, իսկ մարզերում համապատասխան գործունեությունն իրականացվում է Հայաստանի վարչապետի հավանությամբ: «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության աջակցության շնորհիվ ծրագիրը գործում է անվճար հիմունքներով: